ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 69

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 10-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՔՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 10 -Ի N69 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու
2018 թվականի օգոստոսի 10-ի թիվ 11 նիստի

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 70

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հաշվի առնելով սոցիալական օգնությունների տրամադրման հանձնաժողովի թիվ 11 արձանագրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Բուժման նպատակով դրամական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի թվով 1 բնակչի՝ համաձայն հավելվածի:
2. Դրամական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի սոցիալապես անապահով թվով 3 բնակչի՝ համաձայն հավելվածի:
3. «Հատուցում» ծրագրի շրջանակներում Արցախյան պատերազմի ժամանակ զոհված թվով 2 ազատամարտիկների ընտանիքի մեկական անդամի մանսակցությունը նշված ծրագրին ապահովելու համար տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (7) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N70 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ
ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Անդրեասյան Վրեժ Մինասի | 200 000 |

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Թովմասյան Անդրանիկ Թովմասի | 50 000 |
| 2 | Գևորգյան Գոհար Վահանի | 15 000 |
| 3 | Եղիազարյան Սիլվարդ Ավետիքի | 20 000 |

«ՀԱՏՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի ազգանուն, անուն,հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Սարգսյան Համիկ Հմայակի | 50 000 |
| 2 | Շահազիզյան Անահիտ Հովհաննեսի | 50 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ.՝0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 71

## ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ, և հաշվի առնելով «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ- կողմից Մուսալեռի համայնքապետարան ուղղված գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան չափից ավել վճարված անշարժ գույքի հարկը՝ 1 473 884 /մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր ութսունչորս/ դրամ գումարը վերադարձնել կազմակերպությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարի վճարումն իրականացնել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | [signature] | | |

ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ
ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 72

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարանցիներին Գիտելիքի օրվա կապակցությամբ պայուսակներ և գրենական պիտույքներ նվիրելու համար տրամադրել 400 000 /չորս հարյուր հազար/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. (0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 73

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, քննարկելով «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից /պատվիրատու՝ Ջրային տնտեսություն ԾԻԳ ՊՀ/ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ և Պտղունք համայնքների հեղեղատարի վերանորոգման աշխատանքները 10%-ով համաֆինանսավորելու առաջարկը, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Առաջարկել «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ին /պատվիրատու՝ Ջրային տնտեսություն ԾԻԳ ՊՀ/ ՀՀ ոռոգման ցանցերի արդիականացման ծրագրի շրջանակներում նախատեսվող Արմավիրի մարզի Մուսալեռ և Պտղունք համայնքների հեղեղատարի վերանորոգման աշխատանքների փոխարեն իրականացնել Մուսալեռ և Պտղունք համայնքների ոռոգման ներտնտեսային առավել քայքայված ցանցերի վերանորոգման աշխատանքներ՝ համայնքի բյուջեի միջոցներով կատարելով վերանորոգման շինարարության արժեքի 10%-ի համաֆինանսավորումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |

ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 74

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 25-ի «Հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» N68 որոշման մեջ ավելացնել նոր կետ՝ հետևյալ խմբագրությամբ.
1. «2. Կատարել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձավճարի փոփոխություն՝ մեկ տարվա վարձավճարը սահմանելով 40 000 /քառասուն հազար/ դրամ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |

ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«10» օգոստոսի 2018 թվականի N 75

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի առաջին մասի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի սեփականություն հանդիսացող Շառլ-Տիրան Թեքեյան փակուղի թիվ 4 հասցեում գտնվող 04-069-0056-0015 ծածկագրով բնակավայրերի մանկապարտեզի կառուցման համար հողատարածքը՝ շենք-շինություններով՝ անհատույց օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

| ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|
| | | |

ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ